

Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ
25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՔՈՎ

Նախագահ Հոգեւորականներուն
Եւ Պատ. Մխական Խորհուրդներուն

Այս տարի լրացաւ Առաջնորդ Սրբազան Հօր, Գերշ. Տ. Տիրան Արք. Ներսիսեանի ԿՈՒՍԱԿՐԾՆ ՔԱՀԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25-րդ ՏԱՐԻՆ:

Թեմական Խորհուրդը նկատի ունենալով այս պարագան, որոշեց զայն արժանաւոր հանդիսութեամբ տօնել թեմիս Ծուխերուն մէջ, եւ այս առիթիւ գոյացած նիւթական հասոյթը յատկացնել թեմիս համար եկեղեցականներ պատրաստելու ստիպողական եւ նուիրական գործին: Այս նպատակաւ Առաջնորդարանի հաշիւներուն մէջ արդէն իսկ բացուած է առանձինն գլուխ մը ԱՌԱՋՆՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ անունով:

Նիւ Եորթի մէջ կազմուած ՅՈՒՅԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ հետեւեալ որոշումները Ձեր մասնաւոր ուշադրութեամբ եւ գործադրման կը յանձնէ. -

Ա. - Պատուոյ նախագահներ ընտրուեցան Գեր. Տ. Տիրայր Արք. Յովհաննէսեան, Գեր. Տ. Մամբրէ Արք. Գալֆայեան, Վերապատուելի Անդրանիկ Պետիկեան եւ Տիրար Վահան Մ. Բիւրքճեան:

Բ. - Հանդիսութիւնները կատարել նախընտրաբար ճաշկերոյթով եւ զեղարուեստական յայտագիրով. ի հարկին նաեւ մոմավառութեամբ:

Գ. - Յանձնախումբս պիտի հրատարակէ զրբոյկ մը Առաջնորդ Սրբազանի կենսագրութիւնով եւ զանազաններու տպաւորութիւններով Ծուխերուն մէջ օգտագործուելու համար:

Դ. - Այս առիթով գոյացած նիւթական ամէն յասոյթ ղրկել Յանձնախումբիս գանձապահ Պր. ձորն Պաշեանի Առաջնորդարանի հասցէով:

Հանեցէք Ձեր Ծուխին մէջ այս հանդիսութիւնը կատարելու համար նշանակուած օրը յատկացնել այս նպատակին, քանի որ Առաջնորդ Սրբազան Հօր բոլոր Կիրակիները գրաւուած պիտի ըլլան մինչեւ 1954-ի Մայիս ամսու վերջը, երբ նիւ Եորթի մէջ տեղի պիտի ունենայ Յոսելի-Նական փակման հանդիսութիւնը, որուն թուականը կը հաղորդենք յառաջիկային:

Յաջողութեան եւ կարողութեան մաղթանքներով եւ սիրոյ ողջունելու,

Ի ղիմաց
Յորելիական Կեդր. Յանձնախումբի

| | | |
|---------------------|-----------------------|---------------------------|
| Գանձապահ | Ատենապետ | Ատենաղպիւր |
| <i>Տ. Ժ. Պաշեան</i> | <i>Յովհաննէս Կր.</i> | <i>Կրթական Կառ. ԲԵԼ.</i> |
| ձորն Պաշեան | Հմայեակ վրդ. Խնթոյեան | Վրթանէս Ա. Բհնյ. Փափագեան |